

17 Հոկտեմբեր 2013, 1184 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ (ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ) ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ռ ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2013 թվականի հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝

հազ. հեկտար որից՝ ռոտզվող

Հայաստանի Հանրապետության տարածքը՝ 2974.3 207.7

այդ թվում՝

1) Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության՝

ա. գյուղատնտեսական նշանակության հողեր 2051.0 154.2

որից՝

վարելահողեր 448.2 120.2

բազմամյա տնկարկներ 33.3 32.5

խոտհարքներ 121.8 1.5

արոտներ 1055.3

այլ հողատեսքեր 392.4

բ. բնակավայրերի հողեր 151.7 53.1

որից՝ տնամերձ և այգեգործական

(ամառանոցային) հողեր 99.1 52.9

գ. արդյունաբերության, ընդերքօգտագործման

և այլ արտադրական նշանակության հողեր 34.9

դ. էներգետիկայի, տրանսպորտի, կապի,

կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 12.6

ե. հատուկ պահպանվող տարածքների հողեր 331.7

զ. հատուկ նշանակության հողեր 31.6

է. անտառային հողեր 334.3 0.4

ը. ջրային հողեր 25.9

թ. պահուստային հողեր 0.6

2) հողային ֆոնդն ըստ սեփականության սուբյեկտների՝

ա. ֆիզիկական անձանց 537.7 180.9

բ. իրավաբանական անձանց 28.6 2.4

գ. համայնքային 1037.0 22.6

դ. պետական 1370.5 1.7

ե. օտարերկրյա պետությունների, միջազգային

կազմակերպությունների 0.5 0.1

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության

գյուղատնտեսության նախարարին, Հայաստանի Հանրապետության

բնապահպանության նախարարին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝ իրենց կողմից կատարվող աշխատանքների արդյունքում հողային ֆոնդի կազմում կատարվող փոփոխությունները (բազմամյա տնկարկների հիմնում, նոր հողերի իրացում, ոռոգվող հողերի նոր ելքեր, անտառների հիմնում և այլ փոփոխություններ) ներկայացնել Հայաստանի Հանրապետության մարզպետներին, համապատասխան համայնքների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ հողերի ընթացիկ հաշվառումն իրականացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ անտառաշինական ծրագրերի իրականացման ժամանակ հայտնաբերված հողային ֆոնդի բաշխման անճշտությունները, անտառային հողերի սահմաններն ու տարածքները ճշգրտելուց հետո, և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ ազգային պարկերի, արգելոցների, արգելավայրերի սահմաններն ու տարածքները կառավարման պլաններին համապատասխան ճշգրտելուց հետո՝ համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության մարզպետների, համայնքների ղեկավարների հետ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ ընթացիկ հողային հաշվեկշռում ընդգրկելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Տիգրան Սարգսյան